




ՊԱՏԵՐԱԶՄ



Աթն փողանըշանք հարեալ ՚ի խօշիւն մարտից ազդ
առնեն .
« ի պէն » . և ըգնոյն անդրածայնեն դանդք ար-
ձանաց . ի գէն :
գոռ գումարտակաց ճապաղ ըզդաշտիւն անդէն
դիր և տար
Խիստ քան ըզհիւսիս խուժեն գունդագունդ բաղ-
խիլ ՚ի գուպար .
Եւ զմահկանացու լեգէոն վաշտուցն ըզթանձըր
լըրիւ
իրեւ արհաւրաց թեք նըսեմաստուեր պատեն
զուգաթիւ .
Անդ սանձակուտոր հազիւ երիվար ժուժեալ ան-
վեհեր
կանքնի յետս ընդդէմ՝ դափիր ՚ի գարշապար
թաթուլ ընդ այեր .
Նիրհեն դեռ շանթիք . և յամբոխակոյտն անհուն
անըսպառ .
Լըռութիւն իշխան կայ ծանրաթախիծ և սար-
սափահար :

Բիւրաւոր գընդաց լոկ խառնաշըրփոթ աղմուկ և ժըխոր
շահատակելոց զիմագրաւ ՚ի մահ՝ լըսի անդանօր .
Մերիթ թաւալազըլոր շառաշել կառաց , ձիոց խըրխընչիւն ,
Եւ ահեղաթունդ նըշանաբանից կուռ յաճախութիւն ,

Կամ դրօշուց շըրշիւն՝ որ ՚ի հեղաշունչ հողմոց գոգ առեալ
Յերկոսին՝ ՚ի դաշտուն նախանձընդդէմ ծըփան ծալ՝ ՚ի ծալ:

Այլ ահա բոմբիւնք հրետից ՚ի ճակատ գոռան բանակաց,
Ուշմքաձիգ փողոց գանգ տըւեալ ահեղ տան և առնուն դարձուած.
Հուսկ սաստկաշառաչ ըըռնավէժ ճայիթեալ շանթըն բոցահուր
Թըռչի, հարկանէ յորոտ մահաձայն և հիազարհուր.....

ԼԱՄԱՐԹԻՆ

ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ Ի ՔԱՂԿԵԴՈՆ



ՏԱՐԻՈԹՆ մէջ կայ ժամանակ մը՝ յորում դպրոցականն լի սրտա-
գրաւ զգացմամբք և զուարթ ակնկալեաք կը սպասէ հնձելու ա-
ռատապէս իւր բազմաջան քրտանց պտուղը, յետ երկայն ջանից և աշ-
խատութեան: Վերջապէս՝ ՚ի մեծ ցնծութիւն աշակերտաց, ծագեցաւ
օրհնեալ օրը՝ յորում աշխատութիւնն պիտի ընդունէր իւր արդար
վարձքն: Եւ ահա յուլիս 43ին կիրակի օր՝ ՚ի վարժարանի Մխիթա-
րեան Հարց վենեսելկոյ ՚ի Քաղկեդոն կատարուեցաւ պարզեաբաշխու-
թեան հանդէսն:

Այս դպրոցական հանդիսին մէջ գերերջանիկ Ազարեանին ներկա-
յացուցիչ էր Գերպ: Յարութիւն ձամնեան, եպիսկոպոս Պուրսայի:

Վարժարանի գաւիթն ճարտարութեամբ զարդարուած էր. մէջտեղն
կային մեծաշուք թուրք մը, և նկար մը՝ որուն վրայ գրուած էր՝ ՚ի տա-
ճիկ լեզու և կեցյէ թագաւոր մեր» «Բատիշահնմըրզ չօք եալա»:

Հրաւիրելց բազմութեան մէջ մոտադրութեան արժանի էին Մեծա-
պատիւ Լէշիս Պէյ, նախագահ Ճ՝ քաղաքական շրջանակին. Մեծա-
պատիւ Յովհաննէս էֆէնտի Սաբըզ, Մեծ. Ալի Ղալիպ էֆէնտի, տե-
սուչ օստարազգի դպրոցաց. Մեծ. Դիւանապետն հասարակաց դաս-
տիարակութեան պաշտօնարանին. Գերյարգելի Աբրայն Անտոնեանց.
Գեր. Սահակ Վ. Հաճեան քարտուղար կաթողիկէ հայոց Պատրիար-
քարանին, և ուրիշ նախաւոր անձննք:

Երբ նախագահն եկաւ, Համիտէ քայլերգն հնչեցուցին:

Զորս ուղերձք կարդացուեցան, որոց մէջ Վ. Հ. Արիստակէս Վ.
Ղասղանտիլեանի գրութիւնն շատ լաւ տպաւորութիւն ըրաւ Հան.